

ԿԱՎԱՑԻՆ ԼԱՆՁԵՐԻ ԵՐԿԱՐՈՒՏԵՎ. ԿՈՑՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ*

Պրոֆեսոր Ա. Ռ. ՍԿԵՄՈՒՏՈՆ**

Խմբագրի կողմէն է այս լուսաբանությունը՝ «Կավացին լանձերի երկարությունը թեմայով», կարդացված պրոֆ. Ա. Ռ. Սկեմուտոնի կողմից 1964 թ. գիտըրական համակակիցների համար հանդիպության առաջ, մեծ նշանակություն ունեցավ գերազանցությամբ կավացին կավացիած լանձերում կատարվող պրոցեսները հասկանալու համար: Այդ ամսաբանությունը հրապարակվել է «Géotechnique» ամսագրում, 1964 թ. (5, 14, N 2, 77—101):

Դասախոսության այս հայերեն և ռուսերեն թարգմանությունները հրատարակում ենք Հեղինակի ամաձայնությամբ:

Ն Ա. Խ Ա. Բ Ա. Ն

Կավերում փորփածք անցնելիս ցանկացած կետում ժակուտկենացին ճնշում կախված է մասնավորապես գրունտացին ջրերի հորիզոնի դիրքերից, ինչպես առևել զգայի շափով կավերի պատասխան ռեակցիացից, լարումների փոփոխություններից, որք առջի է ունենում փորման հետևանքով: Սակայն, ժամանակի ընացրում, ժակուտկենացին ճնշումը կավերում աստիճանաբար հարմարվում է, չնուշի որ վերջապես հաստատվում է հիգրոստատիկ հավասարակշռություն ունենացին ջրերի հետ: Այս փուլը հայտնի է որպես «երկարատև» պայմաններ՝ հայկագրություն «կարճատև» պայմանների կամ «շինարարության ավարտի» արժանների:

Բոլոր բնական լանձերը գոյություն ունեն երկարատև պայմաններում, ինչպես փորփածքներում այդ փուլը վրա է հասնում միայն մի քանի ամիս տարի հետո, գրա համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը՝ կավացի զլավորապես կավերի ջրաթափանցելիությունից:

Ջրազգներ միայն երկարատև պայմաններով: Այսպիսով, բոլոր դեպքերում, լինի զա փորփածք կամ բնական լանչ, ժակուտկենացին ճնշումը սահեցան պոտենցիալ կամ իրական մակերեսի ցանկացած կետում կարող է որոշվել առունեացին ջրերի հոսքի ցանցի միջոցով (նկ. 1***): Օդովկով ստատիկ նկա-

* Խոսերենից թարգմանեցին երկարա.-միներ. գիտ. թեկն. Գ. Սարգսյանը և տեխն. գիտ. նկա. Զ. Տեր-Մարտիրոսյանը:

** Հանդինի համարարանի հմակերիալ կուէչի բաղարացիական շինարարության պրոֆեսոր, ազգագործական ընկերության անդամ:

*** Նկարները տե՛ս էջ 133—146:

տառումներով, հնարավոր է սահեցման մակերեսի ցանկացած կետում բնդութառությամբ, և ճշգումը և շշչափող լարումը:

Այժմ դիտարկենք դիմագրությունը, որը ցույց է տալիս կավը՝ սահեցման այդ մակերեսով: Վազուց հայտնի է, որ կավի սահմանը դիմագրությունը կարելի է արտահայտել կուպու-Տերցագիի հավասարումով:

$$s = \bar{c}' + (z - u) \operatorname{tg} \bar{\varphi}',$$

որտեղ \bar{c}' «կցումն» է, $\bar{\varphi}'$ -ը «սահմանը դիմագրության անկյունը»: Երկու պահումներում էլ արտահայտված են էֆեկտիվ լարումով $z' = z - u$, որը զործում է նորմալ սահեցման մակերեսի նկատմամբ:

Կայուն լանջում եղած ընդհանուր սահմանը դիմագրության միայն մի մասն է մորթիլիզացվում՝ հավասարակշռելու սահմանը ընդհանուր ուժը: Այսպիսով, մննք կարող ենք ընդհանրապես գրել

$$\sum z = \sum \frac{\bar{c}'}{F} + \sum (z - u) \frac{\operatorname{tg} \bar{\varphi}'}{F},$$

արտեղ F -ը որոշվում է որպես «պաշարի գործակից»: F -ի մեծությունը կայուն լանջերի համար $1,0$ -ից մեծ է: Բայց, եթե տեղի է ունենում փլուզում, սահեցման մակերեսով սահմանը բոլոր լարումների գումարը ճշտորեն հավասարվում է եղած սահմանը դիմագրությանը և $F=1,0$:

Կան մի բանի հուսալի մեթոդներ* ավյալ լանջի F -ի հաշվարկման համար, եթե միայն հայտնի է ծակոտկենային ճնշումը և ստացվել են \bar{c}' և $\bar{\varphi}'$ մեծությունները: Համեմատաբար հեշտ գործ է շնախտված կավերի նմուշների սահման դիմագրության փորձարկումը: Բայց, ինչպես ցույց է տալիս կավերում իրական սողանքների վերլուծությունը, սովորական փորձարկումներով ստացված սահմանը դիմագրության մեծությունները ոչ մի կապ չունեն այն մեծությունների հետ, որոնք գործել են կավերի մեջ փլուզման ընթացքում:

Այս եղրակացությունը, որը ներկայումս հաստատված է առանց որևէ կասկածի, ակներենորեն ունի մեծ պրակարի նշանակություն: Դրա համար մենք պետք է ձգտենք համոզվելու, թե ինչու որոշ զեպքերում նկատվում է զգալի տարրերություն սովորական լարորատոր փորձարկումների արդյունքների և սահման դիմագրության իրական դաշտային նշանակությունների միջև: Նման դեպքերում պետք է աշխատենք մշակել ձեռափոխված լաբորատոր մեթոդներ, որոնք կարող են տալ հուսալի արդյունքներ՝ դրանք ինժեներական նախագծման մեջ վաստակություն սպառագործելու համար: Այդ երկու խնդիրները կազմում են այս գասախոսության բովանդակությունը:

ՊԼԱԿԱՑԻՆ ԽՎ. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև հաճախ հիշատակվելու ևն «գերկոնսոլիդացված» կավերը, ուստի լավ կլինի պարզաբանենք այդ տերմինի նշանակությունը: Նկ. 2-ի

* Այս դասախոսության մեջ քննարկված գեպքերում, եթե սահեցման մակերեսի կարգածքը մոտենած է շրջագծի աղեղին, կիրառվել է զոկոր Ա. Վ. Բիչոսի առաջարկած վերլուծության հայտնի մեթոդը (Bishop, 1954):

կետը պատկերում է կավին անմիջապես նստվածքակուտակումից հետո, որի ակ էստուարիայի հատակում: Կավի հետագա նստեցումն առաջացնում է փեկտիվ լարման ավելացում և խոնավության նվազում: Ե կետում ներկայացած փուլում կավը հանդիսանում է շնորմալ-կոնսոլիդացված այն իմաստով, որ նա չի ենթարկվել ավելի բարձր ճնշումների, քան այժմ գործող վերադիր մրտերի ճնշումը: Նորմալ-կոնսոլիդացված կավերի սահմանը դիմադրությունը չափող համեմատական է էֆեկտիվ ճնշմանը, որի հետևանքով դիմադրության ճնշման կապն արտահայտող գրաֆիկը կոռորդինատների սկզբնակետով անցուող ուղիղ գիծ է:

Ետառցագաղտային կավերից շատերը նորմալ-կոնսոլիդացված են. բայսը նստել են ծովի մակարդակի էվստատիկ բարձրացման ընթացքում, որը ուղղի է ունեցել ուշ պերիստոցենում* սառցավահանի հալման հետեւանքով: Մակայն կավերի զգայի մասն ավելի հին է և իր երկրարանական պատմության ընթացքում ենթարկվել է դդայի ճնշումների, որոնք համապատասխանում են սրանց վրա բնկած մի բանի հարյուր և նույնիսկ հազար մետր հաստությամբ սպառների կշռին, որոնք հետագայում հեռացվել են էրողիայի հետևանքով: Այդ կավերը զանվում են գերկոնսոլիդացված վիճակում՝ ներկայացված նկ. 2 և կետով:

Ճնշման նվազմանը զուգընթաց ավելացել է խոնավությունը, սակայն խոսափության այդ աճը զգալիորեն պակաս է կոնսոլիդացիայի ընթացքում խոնավության նվազումից: Այդ պատճառով չնայած ճ կետում կավը զանվում է նույն էֆեկտիվ ճնշման տակ, ինչ և կավը Յ կետում, գերկոնսոլիդացված կավի խոսափությունն ավելի քիչ է, մասնիկները ավելի խիտ են դասավորված և զարգանալի չեն, որ սահմանը դիմադրությունն ավելի է, քան նորմալ-կոնսոլիդացված կավերի մաս:

Գերկոնսոլիդացված կավերի օրինակ են լեյայի, զոլտի և լոնգոնյան կավերը: Դրանք, ինչպես նաև այդ կարգի շատ այլ կավեր, ճեղքավորված են (fissured) և ունեն անշատման ճեղքեր (jointed): Դրանք երբեմն պարունակում են նաև սահման հայելիներ, հավանաբար որպես տեկտոնիկ շարժումների համար էրոզիոն ցիկլի ժամանակ ոչ-հավասարաշափ լայնացման արդյունք:

Գլաբարային կավերը նույնպես գերկոնսոլիդացված են՝ ավելի շուտ սառուցի, քան նստվածքների կշռի ծանրության տակ, քայլ հաճախ դրանք քիչ են խախաված ձեռք չարված լինելու պատճառով և հանդիսանում են ճեղքավորված ճյուղ, առանց սահման հայելու: Շատ նորմալ-կոնսոլիդացված կավեր են զերծ են այս թերություններից, չնայած նման կավերում երբեմն դիտվում են ճեղքեր:

Այս դասախոսության մեջ ես կանդրագառամ զիմավորապես գերկոնսոլիդացված կավերին, քանի որ զրանց հետ կապված են ավելի խոշոր պրոբլեմներ և ավելի տարածված են, քան նորմալ-կոնսոլիդացված կավերը^{**}:

Քիտենը գերկոնսոլիդացված կավերի սահմանը դիմադրության բնութագրերը (նկ. 3): Այս դժագրի վրա ցույց են տրված տիպիկ արդյունքներ, որոնց

* Զարրորդացին սիստեմի վերին բաժնին (ծան. խմբագրի):

** Բարձր զգայնության գերկոնսոլիդացված կավերը, ինչպես օրինակ, կեդի կավերն Արմելլան կանագայում, իբենցից ներկայացնում են հատուկ խումբ: զրանց հատկությունները կարող են նկատելիորեն տարրերվել տիպիկ գերկոնսոլիդացված կավերի հատկություններից, որոնք այստեղ քննարկվում են:

ստացված են գանդաղ ցամաքուրդային փորձարկումների ընթացքում սահմանադիրի մեջ՝, որտեղ կավը ևնթարկվել է մի բանի սանտիմետրի հասնող տեղաշարժերի:

Կավի գեֆորմացմանը զուգընթաց առաջանում է աճող դիմադրություն: Սակայն էֆեկտիվ ճնշման տվյալ նշանակության դնապում կա դիմադրության որոշակի սահման, որը կարող է ցուցաբերել կավը. դա Տ₁ «պիկային դիմադրություն» է: Սովորական պրակտիկայում փորձը դուգարեցվում է, երբ պիկային դիմադրությունը պարզորեն հաստատված է և Տ₁-ի մեծությունը պարզապես նշանակվում է որպես կավի «սահմանադրություն» (տվյալ էֆեկտիվ ճնշման դեպքում), առանց հետագա սահմանափակումների, բացի, հասկանալի է, այն ցուցմունքի, եթե փորձն անցկացվել է ցամաքուրդան պայմաններում, այսինքն առանց ծակոտկենային ճնշման զարգացման:

Բայց եթե փորձարկումը շարունակվում է, ապա մենք գտնում ենք, որ տեղափոխման մեծացմանը զուգընթաց կավերի դիմադրությունը կամ ամրությունը նվազում է: Սակայն այդ պրոցեսը, որը կարելի է անվանել «գեֆորմացիայի ընթացքում թուլացում», չի հանդիսանում անսահման, բանի որ տվյալ սահմանում ձեռք է բերվում հայտնի Տ₁ «մնացորդային դիմադրություն», որը պահպանվում է նույնիսկ կավը մեծ տեղափոխումների ենթարկվելիս^{**}: Մինչև այժմ ուսումնասիրված շատ քիչ կավերի մեջ այդ տեսակետից դիմադրությունն ընկնում է մինչև մնացորդային նշանակությանը այն բանից հետո, երբ պիկային դիմադրությունից հետո կավը տեղաշարժվում է 2—5 ամ-ութ: Սակայն կան դաշտային տվյալներ, ըստ որի դիմադրությունը չի դառնում ավելի նվազ, բան այդ լարորատոր նշանակությունը (կամ շատ քիչ նվազ) նույնիսկ մի բանի մետք տեղաշարժի գեպրում:

Այժմ կարելի է սահմանարքում նույն կավի վրա անցկացնել երկրորդ փորձը, բայց այլ էֆեկտիվ ճնշման տակ: Արդյունքները կլինեն նույն կարգի, ինչպես վերը նկարագրածները: Եթե ենթարկենք, որ կատարված է երեք նման փորձ, ապա պիկային և մնացորդային դիմադրությունները, որոնք գրաֆիկում ներկայացված են որպես էֆեկտիվ ճնշման փունկցիա, ցուց կատան տարրերություն, որը մոտավորապես համապատասխանում է Կուլոն—Տերցադի օրենքին: Դրա համար պիկային դիմադրությունը կարելի է արտահայտել հետեւալ հավասարումով:

$$S_1 = c' + \sigma' \lg \varphi',$$

* Ավելի ճիշտ «արկղային գործիքում սահման» համար: «Սահմանադիրի գործիք» տերմինն ավելի լայն տարածում է գտել ուսուական գրականության մեջ (Սան. Խմբագրի):

** Զիսախտված կավերի (Վեզեր—Էլրայի ջրանցքից) մնացորդային դիմադրության առաջն որոշումը հրատարակվել է 1937-ին դ-ր Բ. Թիգեմանի կողմից (Tiedemann, 1937): Նա սահման համար կատարել է ցամաքուրդային փորձարկումներ օպակային գործիքի վրա: Նման փորձարկումներ կատարվել են նաև դ-ր Մ. Յու. Հվորսլիի կողմից երկու տեսակի կավերի վրա (վենական տեղել և փորձ թելտայից կավ), որոնք կոնսոլիդացված են շիլայանման վիճակից (Hvorslev, 1937): Պրոֆ. Բ. Հեֆելին առաջինը կիրառել է «մնացորդային» տերմինը 1938 թվին գերմաներեն և 1950 թվին անգլերեն լեզուներում (Haeseli, 1938, 1950): Նրա ծառայությունը կայանում է նրանում, որ նա հաստատապես նշում էր մնացորդային դիմադրության պրակտիկ նշանակությունը զենան այն ժամանակ, եթե հազիվ թե որոնք մեկն հետաքրքրում էր կավերի սահման այդ տեսակյունից: Զ. Մակ նեղ թարենքուրը հայտնել է այն փորձարկումների մասին, որոնցով մոտավորապես որոշվում է որոշ խացված կավերի մնացորդային դիմադրությունը (Turnbull, 1952):

իսկ մնացորդային դիմագրությունը

$$s_r = c_r - z' \operatorname{tg} z_r'$$

Փորձարկումներից ստացված արդյունքները համարյա անփոփոխ ցուց են տալիս, որ c_r շատ փոքր մեծություն է, հավանաբար զրոյից շատ չնշին տարբերվող: Այդ պատճառով ևս ենթազրում եմ, որ դասախոսության հնատագա մասում մենք կարող ենք մնացորդային դիմագրությունը գրել այսպես:

$$s_r = z' \operatorname{tg} z_r'$$

Այլ խոսքով, պիկային դիմագրությունից զեպի մնացորդայինը շարժվելիս, c' կցման հավածքը լրիվ վերանում է: Նույն պրոցեսի ընթացքում նվազում է նաև սահմանափակության անկյունը՝ որոշ կավերի մեջ 1° կամ 2°, իսկ մյուս ների մեջ՝ նույնիսկ մինչև 10°:

Հիշատակության արժանի է, որ սահմանափակությունը պերկոնսուլիդացված կավերը ձգտում են ընդարձակվել, մանավանդ պիկն անցնելուց հետո, որի հետեւնքով հաճախ պիկային դիմագրության որոշ մասի անկումը պարզանացված է խոնավության աճով: Դրա հետ իր նշանակությամբ համեմատելի է միայն նույր ժապավենների կամ մարզերի զարգացումը, որոնց մեջ թեփուկային կավային մասնիկները կողմնորոշվում են սահմանի ուղղությամբ*: Նման մասնիկների զանգվածի սահմանափակությունն անկանոն կողմնորոշման զեպրում պետք է լինի ամելի, քան մասնիկների զուգահեռ դասավորման զեպրում:

Եվ բանի որ հնարավոր է, որ կողմնորոշման մարզերի առաջացումն սկսվում է համեմատաբար փոքր զեֆորմացիաների ժամանակ (Գոլզդատեյն և Ճ., 1961**), կան կարենոր ապացուցներ համարյա լրիվ կողմնորոշված կավային մասնիկների անբնդատ ժապավենների առկայության, կավեր, որոնք ենթարկված են մեծ զեֆորմացիաների. այդ ապացուցներն ստացվել են ինչպես լարորատորիայում (Astbury, 1960), այնպես էլ զաշտում (ինչպես այդ կնկարագրի ստորե):

Անկախ պիկն անցնելուց հետո դիմագրության անկման ֆիզիկական բացարձությանը, դիմագրության այդ նվազման դոյլությունը (մանավանդ զերկոնսուլիդացված կավերում) կարելի է համարել որպես լրիվ հաստատված փաստ: Ուստի, եթե որևէ պատճառով կավը ստիպված է անցնելու պիկը նրա զանգվածի որեւէ որոշակի կետում, ապա դիմագրությունն այդ կետում նվազում է: Դրա հետևանքով կավի որևէ այլ կետում գործազրում են լրացուցիչ լարումներ, որոնք հանդեցնում են այն բանին, որ պիկն անցնում է նաև այդ կետում: Այդ հանապարհով սկսվում է առաջընթաց քայլայման զարգացումը և պրոցեսի վերջում սահմանափակությունը երկարությամբ դիմագրությունն ընկնում է մինչև մնացորդային արժեք: Պարզ է, որ մասնավոր զեպրում սահմանը կարող է կատարվել ավելի վաղ, քան մինչև ողջ խորությամբ կհաստատվի մնացորդային դիմագրությունը, սակայն հենց որ սկսվում է առաջընթաց քայլայմումը,

* Թեփուկային կավային մասնիկների կողմնորոշումը սահմանափակ հաստատված է պրաֆ. Գ. Ե. Տեր-Մանանյանի կողմից երեսնական թվականների կեսերին. այդ թեմայով զեկուցանքը ներկայացված էր Գրունաների մեխանիկայի և հիմքաշինարարության 1-ին միջազգային կոնգրեսին, որը կայացել է 1936-ին Քեմբրիջում, Մասաչուզետսի նահանգում (ԱՄՆ) (Սահմանագրի):

** Դրականությունը տե՛ս էջ 132:

կազի միջին դիմագրությունն անշեղորեն նվազում է սահմանային մնացորդային դիմագրության ուղղությամբ:

Այժմ լավ հայտնի է, որ կարծր նյութերի դիմագրությունը խիստ նվազում է միկրոսկոպիկ ձեղքերի, անցքերի և այլ պակասությունների առկայության դեպքում: Պարզ արտահայտվելով, նրանց գործունեությունը կայանում է լարումների կենտրոնացման մեջ. նրանք հանդիսանում են պատճառն այն բանի, որ քայլայումը տեղի է ունենում միջին լարումների գեպքում, ավելի նվազ, քան նյութի իդեալական դիմագրությունը*: Եվ կարծես թե հմար չկա հնմապքելու, որ միկրոսկոպիկ ձեղքերը, անջատման ձեղքերը և առհեցման հայելիները, որոնք առկա են շատ կավերի մեջ, նույնպես չեն առաջացնում կոպիտ համանման ձեռվլ լարումների կենտրոնացում, անկախ այն փաստից, որ նրանք գործում են որպես թուլացման հրապարակներ, քանի որ նվազ հնարավոր է, որ դիմագրությունը ձեղքերում և անջատման ձեղքերում կարող է նկատելիորեն գերազանցել մնացորդայինի արժեքը:

Այստեղից տրամաբանական է սպասել, որ ձեղքավորված և կամ անջատման ձեղքերով կավի ընդունակ չէ զարգացնելու իր պիկային դիմագրությունը սահնեցման մակերեսի ողջ երկարությամբ: Ձեղքերը և անջատման ձեղքերը ոչ միայն նվազեցնում են կավային զանգվածի միջին դիմագրությունը, այլև նրանք կարող են տեղական գերլարումների հետևանքով նպաստել պիկի վերացմանը. դրանից հետո տեղի է ունենում դիմագրության զարգացող անկում:

Ձեղքերը և անընդհատության մյուս ֆիզիկական խախտումները կավերի մեջ չեն հանդիսանում սողանքների առաջացման միակ պատճառը, սողանքներ, որոնք տեղի են ունենում պայմանական պիկային դիմագրությունից քավականին ցածր դիմագրությունների գեպքում: Լարորատոր փորձերով, որոնք տևում են մարսիմում մի քանի շաբաթ, որոշված պիկային դիմագրությունը կարող է զգալիորեն բարձր լինել որոշ կավերի մեջ զիտվող այն դիմագրությունից, եթե լարումը գործում է տարիներ, տասնամյակներ կամ զարեր: Այլ կերպ ասած, պետք է հաշվի առնել սահմանական սողքի ազգեցությունը: Սակայն մինչև այժմ կա շատ շնչին տեղեկություն պիկային դիմագրության մեծության վրա այդ ազգեցության գնահատման համար:

Խոնավության և շերմաստիճանի սեղոնային տատանումները ևս կարող են նվազեցնել կավերի դիմագրությունը, բայց նրանց ազգեցությունը սահմանափակվում է ոչ մեծ խորություններով: Հետևաբար, թեև նրանք հնարավոր մեծ նշանակություն ունեն գեռութքովագրական պրոցեսներում, քիչ հավանական է, որ սույն զարսախոսությունում քննարկվող համեմատաբար խոր տեղադրված փլուզումների (սահմանական սողքի ազգեցությունը) համար սեղոնային փոփոխություններն ունենան կարևորություն, բացառությամբ այն փաստի, թե սահումը կհամընկնի՝ ժամանակի այն հատվածներին, եթե գրունտային ջրերի մակարդակը չափազանց բարձր է: Այդ ժամանակաշրջանում ծակոտենային ճնշումն ևս չափազանց բարձր է և համապատասխանաբար էֆեկտիվ լարումը (իսկ այստեղից էլ դիմագրությունը) ցածր է: Այնուամենայնիվ մենք դործ ունենք կավի սահմանական պարամետրերի հետ, բայց ոչ այնպիսի երևույթների աղե-

* Ֆիզիկական պրոցեսների հիմալի ակնարկ, որը բնորոշում է պինդ ժարմինների բայցումը, կարելի է գտնել պրոֆ. Ս. Հ. Քոտրելի 1963 թվին կարգացած Բակորինան դասախոսության մեջ (Cottrell, 1963):

ցույլան հետ, ինչպիսիք են ծակոտկենային ճնշումը, երկրաշարժերը, կողային ճնշման վերացումը և այլն:

Նման բնդ՛աներացումներից հետո ժանոթանանք որոշ իրական փորձարկումների հետո նկ. 4-ում պատկերված են այն փորձարկման արգունքները, որոնք անցկացվել են Ռուլտոնս վուլֆի (Uttawafurzelziffern) սահեցման ենթարկված կավերի նմուշների վրա Առլլ Մեքանիկս լիմիտիդի (Soil Mechanics Ltd.) և իմպերիալ կոլեջի (Imperial College) լաբորատորիաներում: Կավին առաջացնում է հողմանարկած քարածխային արդիլիաների զոտի 10 մ հզարությամբ և ծածկում է հովափի լանջերը, որոնք էրոզիայի են ենթարկվել այդ շրջանում՝ վերջին ցամարային սառնեցման նահանջի ժամանակ:

Գրաֆիկի վրա ցույց է տրված կավի շխախտված նմուշի համար լարում-տեղաշարժում տիպիկ կորագիծը: Այդ փորձի ընթացքում պահպան է հաստատուն էֆեկտիվ ճնշում՝ 1,56 կգ/սմ²: Պիկային ճնշումը 0,76 կգ/սմ² է, իսկ մնացորդային դիմագրությունը՝ 0,36 կգ/սմ²: Դիմագրությունները պատկերված են վերին գծագրում՝ համապատասխանաբար շրջանակով և խաչիկով: Նման փորձարկումները այլ նմուշների վրա, տարրեր էֆեկտիվ ճնշումների տակ, ցույց նն տալիս, որ պիկային դիմագրությունը կարելի է արտահայտել $c' = 0,16 \text{ кг/սմ}^2$ և $\gamma' = 21^\circ$ պարամետրերով, մինչդեռ մնացորդային դիմագրությունն ընկնում է մինչև կորդինատների սկզբնակետով ($c'_c = 0$) անցնող դիմը, որն ունի $\gamma_c = 13^\circ$ թիրություն:

Այս փորձերն անց են կացվել կազազրանդեի կարման գործիքների մեջ հաստակագում քառակուսի կարվածքով նմուշների վրա, որոնք ունեին 6,0 սմ կողմ և 2,5 սմ հաստություն: Առաջին անցման ավարտից հետո (մոտ 8 մմ տեղաշարժով) կարման գործիքի տուփը ետ էր պատվում և կավի նորից ենթարկվում էր կարման: Այդ պրոցեսը կրկնվում էր այնքան, մինչև որ կավի դիմագրությունը նվազելով գանում էր հաստատուն: Եթեու ուղղությամբ էլ շարժումները գանգաղ էին, այնպես որ հավանաբար կավի մեջ չէր զարգանում ավելցուկային ծակոտկենային ճնշում: Փորձը տեսում է 6 օր*:

Պետք է ենթագրել, որ այդ տեխնիկան կատարյալ չէ: Ամեն հետադարձի ժամանակ գիտավում է ոչ մեծ պիկ, որը ցույց է տրված կետագծերով նկ. 4-ում և կան որոշ կասկածներ, որ սահեցման մակերեսի վրա կարող է տուշանալ զրիկացում: Իդեալական զեպքրում տեղաշարժը պետք է կատարվի անբնդատ մեկ ուղղությամբ և այդ իդեալին որպես մոտեցում դոկտ. Ալան Բիշուպը նախագում է սահմանագիտություն 17,8 սմ երկարությամբ: Մինչդեռ կարծես հետագարձ տեխնիկան տալիս է կավի շխախտված նմուշների մնացորդային դիմագրության սրոշման հասարակ և ընդունելի մեթոդ, օգտագործելով լուրաբան-ըոր լաբորատորիայում եղած սարքավորումը**:

* Պրաֆ. Գ. Բորովիկան նկարագրել է հետադարձ սահմանագիտության գործիքը կավի մեջ նույր լարային սպոսի միջազգության բացելով և նույնացը գործիքում այնպես, որպեսզի այդ հարթությունը հորիզոնի նկատմամբ թերված լինի ($45 + \gamma'/2$) անկյան տակ: Գեփորմացիալի շատ փոքր արգայիտյունների դեպքում անցկացրած նախնական փորձարկումները ցույց են տալիս, որ

** Հնարավոր է, որ մնացորդային դիմագրությունն անա կարելի է որոշել կավի մեջ նույր լարային սպոսի միջազգության բացելով և նույնացը գործիքում այնպես, որպեսզի այդ հարթությունը հորիզոնի նկատմամբ թերված լինի ($45 + \gamma'/2$) անկյան տակ: Գեփորմացիալի շատ փոքր արգայիտյունների դեպքում անցկացրած նախնական փորձարկումները ցույց են տալիս, որ

Ուղարկում ստացվել էին նույնպես մի քանի նմուշներ, որոնք իրենց մեջ պարունակում էին իրական սահեցման հարթություն: Այդ նմուշներից եռառանցք փորձարկումների համար պատրաստվել էին նմուշներ այնպես, որպեսզի սահեցման հարթությունները հորիզոնի նկատմամբ թերված լինեին 50° -ի տակ, իսկ նմուշները ենթարկվելին դանդաղ ցամաքուրդային փորձարկումների: Ինչպես և սպասվում էր, խախտումը կատարվել էր նախօրոք գոյություն ունեցող սահեցման մակերեսներով: Արդյունքները պատկերված են նկ. 4-ում սեղանակներով^{*}:

Կարելի է տեսնել, որ սահեցման հարթությունում զարգացող դիմադրությունը շատ մոտ է այն մնացորդային դիմագրությանը, որն ստացվում է այն դեպքում, եթե սկզբնապես շխախտված, շկտրված կամի նմուշը ենթարկվում է մեծ տեղաշարժեքի:

Ավելին, այն ժամանակ, եթե այս վերջին նմուշների դիմադրությունն ընկնում է մինչև մնացորդային արժեքը, զարգանում են բացառապես լավ արտահայտված սահեցման հայելիներ (նկ. 5, ներդիր):

Կիրառելով ձևովերով և մոմերով ներծծան տեխնիկան, իրին և Ռ. Ֆ. Հենիգերուն (Սովոր Մեքանիկս կիմիտիգից) հաջողվել է պատրաստել Ուղարկում վուդի կավերի մի քանի նուրբ կտրվածքներ, որոնք ցուց տվեցին սահեցման հարթության բնական տեսքը: Իրականում երեսում էր, որ նա կաղմված է անընդհատ ժապավեններից, որոնցում կավային մասնիկներն այնքան լավ էին կողմնորոշված սահերի ուղղությամբ, որ նրանք առաջացնում էին տեղամասեր, որոնք դրսերում են կարուկ մարում իւաչված նիկուններով դիտելիս: Սահեցման զինավոր «հարթությունն» ընդորկող տեղամասն ուներ 20 լ կարգի հաստություն: Նրա հետ էին կապված սահերի մի քանի երկրորդական տեղամասեր, որոնք տեղավորված էին կավի հիմնական զանգվածի ներսում, ունեին մեզմ, սահեցման մակերեսին ոչ միշտ զուգահեռ կողմնորոշում և մոտ 2.5 մմ հաստություն: Դա իրենից ներկայացնում էր փափկացած զոտի, որը հաճախ դիտվում էր անմիջապես սահեցման հարթության մոտ: Այս զոտու երկու եզրերում կավը հաղիկ թե դրսերում էր որևէ կողմնորոշում:

Ուժեղ կողմնորոշված մասնիկների տեղամասեր դիտվում էին նաև այն գեպքում, եթե լիրվ փափուկ տրորված կավը ենթարկվում էր մեծ դեֆորմացիայի (Astbury, 1960): Ավելին, իմպերիալ կոլեցում Դերեկ Փետլիի փորձերը ցուց տվեցին, որ Ուղարկում վուդի կավի, նորմալ-կոնսոլիգացված շղլացումից և պատրաստված հոսունության սահմանի գեպքում, դիմագրության մնացորդային անկյունը համեմատելի է՝ $\varphi' = 13^{\circ}$ արժեքի հետ, որը որոշված է բարձր

* Եթե խախտման ժամանակ եռառանցք նմուշներում զործող ուղղահայաց և հորիզոնական դարձումները σ'_1 և σ'_3 են և եթե ու հորիզոնականի նկատմամբ սահեցման հարթության թերության անկյունն է, ապա

$$s_r = \frac{1}{2} (\sigma'_1 - \sigma'_3) \cdot \cos(2\pi - 90^\circ); \quad \sigma' = \frac{1}{2} (\sigma'_1 + \sigma'_3) - \frac{1}{2} (\sigma'_1 - \sigma'_3) \cdot \sin(2\pi - 90^\circ),$$

նկ. 4-ում պատկերված տարր հոժ սկ շրջանակներից չորսը ներկայացնում են սահերի տափառ այնպես տեղաշրջված նմուշների փորձարկման արդյունք, եթե սահեցման հարթությունները համընկնում էին: Ուստի վերին և ստորին մասերի բաժանման հարթության հետ:

զեթորմացիանների գեպրում սահնեցման բնական հարթությունով՝ զերկոնսոլիդացված կավերի փորձարկման ժամանակ*:

Այդ պատճառով հարավոր է ենթադրել, զուցել պարզեցման որոշ աստիճանով, որ ցանկացած էքսէտիլ մնչման գեպրում մնացորդային դիմադրությանը նույնն է նորմալ-կոնսոլիդացված և գերկոնսոլիդացված կավերի համար, ինչպես պատկերված է** նկ. 6-ում: Եթե այդ գաղափարը ճիշտ է, ապա շուրջ անկյունը պետք է լինի հաստատուն յուրաքանչյուր տվյալ կավի համար, անկախ նրա կոնսոլիդացիայի պատմությունից և կախված է միայն նրա մասնիկների բնույթից:

Այս անսահեար որոշ շափով հաստատում են նկ. 7-ում բերված տվյալները: Գրաֆիկի վրա որոշ նորմալ-կոնսոլիդացված և գերկոնսոլիդացված կավերի համար սահների մնացորդային դիմագրության անկյունների մեծությունները ցույց են տրված կավային ֆրակցիայի արժեքի դիմաց (2 դ.-ից փոքր մասնիկների կշռային տոկոսը): Կամի երկու վիճակների միջև զտնված չէ որևէ սորշակի տարրերություն, մինչդեռ բոլոր կետերը ցույց են տալիս շուրջապահ կավային մասնիկների պարունակության աճին զուգը իսկապես, այս արդյունքները ցույց են տալիս, որ եթե զրունար ամրագությամբ կազմված լիներ կավային մասնիկներից, ապա սահների մնացորդային դիմագրության անկյունը և շիման շուրջապահ կլիներին համեմատելի: Շիման անկյունը որոշել են Հորը և Դեերը տարրեր շերտավոր-ցանցային միներալների, այդ թվում բիոտիտի, տալկի և բլորիդի համար (Horn and Deere, 1962): Արժեց ֆիզիկական հատկություններն, ըստ երեսութիւնն, շատ չեն տարրերվում այնպիսի կավային միներալներից, ինչպիսիք են իմմենիտը և կաոլինիտը***:

Բնդհակառակը, կվարցի հատիկներն ավազի կամ փոշու մեջ, որոնք կոպիտ զնդանեկն են, չեն կարող կողմնորոշվել: Ուստի ավազների և փոշու համար մնացորդային անկյունը մնում է հավասար այն նշանակությանը, որը մոտավորապես արտահայտվում է անկանոն կողմնորոշվածությամբ՝ մասնիկներին հատուկ հարաբերակցությամբ, մասնիկներ, որոնք կտրված են հաստատուն ծավալի գեպրում.

$$\operatorname{tg} \gamma_1 = \frac{\pi}{2} \operatorname{tg} \gamma_2$$

Պարզ է, որ բնդհանուր գեպրում, եթե զրունար կազմված է կավի և փոշու (և ավազի) մասնիկներից, փոշին կձգտի մեծացնել շուրջ շուրջապահ կամեմատ

* Խնաման արդյունքներ գիշատակվում են թիվեմանի կողմից: Ըստ նրա վեզեր-էլբայի շիրացումից նորմալ-կոնսոլիդացված կավի մնացորդային դիմագրությունը որոշ շափով տարրերվում է շիմանությամբ (գերկոնսոլիդացված) նմուշների մնացորդային դիմագրությունից (Tiedemann, 1937):

** Այսպիսով, թենի կարելի է ասել, որ մեծ գեֆորմացիաների գեպրում գերկոնսոլիդացված կավի իրականում իրեն պահում է որպես նորմալ-կոնսոլիդացված նյութ կցման զերսական հատվածով, սակայն այդ հաստատումն ընդհանրապես հանդիսանում է ճիշտ, եթե միայն մենք համեմատում ենք նորմալ-կոնսոլիդացված կավի հետ, որը բերված էր մնացորդային վիճակի:

*** Այս նույրը փորձելու անցկացվել են զախ. Հ. Մ. Հորնի և պրոֆ. Գ. Ռ. Դեերի կողմից շերտավոր-ցանցային միներալների երկու նմուշների կիվածի հարթաթյունում զարգացող շիման շափման միջոցով: Այդ պատճառով նման փորձելուն ստացված շիման անկյունը հանդիսանում է նաև կողմնորոշված մասնիկների հարակցության սահների դիմագրության անկյունը: Այս արժեքները ցույց են տրված նկ. 7-ում միներալների համար չը սկայան վիճակում:

կավային մասնիկների համար, խանգարելով որոշ շափով կավային մասնիկների լրիվ կողմնորոշմանը: Համենայն դեպք փոշու զգալի պարունակությունը նպաստում է կողմնորոշման այն պատճառով, որ փոշին ունի համեմատաբար բարձր սահման դիմագրության անկյուն:

ՄՆԱՅՈՐԴԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆ

Բախվելով այն պրոբլեմին, թե անհրաժեշտ է արդյոք գերկոնսոլիդ դացված կավերում լանջերի կարունությունը որոշելիս հաշվի առնել պիկային կամ մնացորդային դիմադրությունը, նախագծողը կանգնում է ավելի կարեռ հարցի առաջ, որի հետ նա պետք է գործ ունենա: Այս գրությունը պատկերավորելու համար ես նկ. 8-ի վրա հավաքեցի լրիվ տիպիկ գերկոնսիդացված կավերի չորս փորձարկման արդյունքները, որոնց ինքնարտցիոն հատկությունները ի մի են բերված № 1 աղյուսակում:

Ա Գ Հ Ո Վ Ո Ւ Թ Ե

Կավերի ինդեքսացիոն նատկուրյունները՝ պատկերված նկ.

8-ի վրա (միջին նշանակուրյուններ)

Կավերի անվանումը	W _L	W _P	Կավային ֆրակցիա
Սելսետ (Selset)	26	13	17
Ջարի (Jari)	70	27	47
Լոնդոնյան կավ (London Clay)	82	29	55
Ուոլտոնս Վուոդ (Walton's Wood)	53	28	69

Սելսետի գլաբարային կավը խտացված է եղել ստուցի շափակոր հաստության տակ, բայց այն ավազաշատ է և կավային ֆրակցիան կազմում է միայն 17%: Համապատասխանաբար պիկային դիմադրության համար կցման հատվածը մեծ չէ և այստեղ պիկային և մնացորդային սահման դիմադրությունների միջև եղած անկյունների անկումը կազմում է միայն 2%: Բայց նոյնիսկ այստեղ, լանջերի կայտնությունը վերլուծելիս, այս կավերում, ինչպես գտ կերեա ստորև, ապահովության գործակիցների տարբերությունը, հաշված բար պիկային և մնացորդային դիմադրությունների, կազմում է ավելի բան 30%:

Հիմալայի նախալեռների ջարիի կավը պատկանում է վերին-սիվալիկյան շերտին* և խտացված է եղել ամենաբիշը 600 մ հզորություն ունեցող նստվածքների կշռի տակ: Այս կավը փորձարկվել է պատվար նախագծելու կապակցությամբ, որը կազմում էր Արևմտյան Պակիստանում Մանգլա խոշոր նախագծի մի մասը: Նմուշներում չնն հայտնաբերվել հողմահարության նկատելի նշաններ, և, ինչպես կտեսնենք, պիկային կցման հատվածը բարձր է: Իրոք, կավը բավականին ամուր է շխախտված վիճակում: Չնայած դրան, մնացորդային դիմադրությունը ցույց շի տալիս կցման հատված, և սահման դիմադրության ան-

* Արվալիկյան սիստեմ՝ ավազարարերի, կոնգլոմերատաների, գրավելիտների և նեղանի կավային թերթարերի շերտախումբ է, որը լցում է Հիմալայների առաջատար կորությունը, ավելի բան 2000 մ հզորությամբ (Սան. խմբագրի):

հյունը հավասար է 18%: Էֆեկտիվ ճնշման 0,49 կգ/սմ² արժեքի դեպքում պիկային դիմադրությունը 3,6 անգամ բարձր է, բայ մնացորդայինը, որի պատճառով հարցի լուծման փաստացի նշանակությունը՝ թե որ դիմադրությունը պետք է հաշվի առնել, հաշվարկում, կարիք չունի հետագա ընդունման:

Էղբենային հասակի լոնգոնյան կավր խտացված է եղել նստվածքների կշռի տակ, որոնք հետազույց հեռացվել են էրոզիայի պատճառով և որոնց հաստությունը հասնում է 150 մ էսսերսի արելլան մասում և 300 մ՝ լոնցոնից դեպի արևմուտք գտնվող շրջաններում: Փորձարկման արդյունքները, որոնք պատկերված են նկ. 8-ում, վերաբերում են հողմահարված կավերի գոտուն, որոնք տիպիկ ատրածում ունեն մինչև 12 մ և ավելի խորությունները: Ստորև կարվեն մի բանի սողանքների նկարագրությունն այդ գոտում, այս սողանքների համար պաշարի գործակիցը, հաշված պիկային դիմադրության հիման վրա, ստացվեց մոտավորապես 2,7 անգամ ավելի, բան մնացորդային դիմադրությունը որոշվելու դեպքում:

Վերջապես նկ. 8-ում բերվում է Ուոլտանս Վուդ կալի տվյալները: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ պիկային պաշարի գործակիցը, հաշված այդ սողանքի իրական սահմանը մակերեսութիւն համար, ստացվում է մոտավորապես 3 անգամ բարձր, բան այն արդյունքը, որը ստացվում է մնացորդային դիմադրությունը կիրառելիս:

Այս պատճառով, այն հարցը, թե անհրաժեշտ է արդյոք հաշվի առնել պիկային կամ մնացորդային դիմադրությունները հաշվարկներում, պետք է հանվի, որպես զոտ ակազիմիական նշանակություն ունեցող հարց: Դասախոսության մնացած մասում հնարավորին չափ ես կրբաղմեմ այն սողանքների զրնությամբ, որոնք մատչելի են այժմ և որոնք կարող են օգնել որևէ չափով լուսարաներու այս պրոբլեմի:

Իմ կողմից առաջին հերթին կտրվեն սողանքների նկարագրությունները և այնուհետև կնիրկայացվեն սողանքի կայտնության վերլուծության արդյունքները: Արդյունքները պետք է արտահայտվեն միջին էֆեկտիվ լարումների ² և միջին շոշափող լարումների ³ միջոցով, որոնք տպաւմ են սահմանամակերեսի վրա: Այս երկու արժեքները 9-րդ նկարի վրա տալիս են մի կետ, որը ցույց է տրված հոծ սև շրջանակով և այդ կետը մնում է հաստատում «հերկարատեն» պայմաններին հասնելուց հետո, եթե նկատի շունենանք ծակուկենային ճնշման ճնշումը առժեքը հաշված է՝ նկատի առնելով ծակուկենային ճնշման լրիվ գնահատումը:

Երկրորդ հերթին ես կրերեմ պիկային մնացորդային դիմադրությունների լարուատոր որոշման արդյունքները: Պիկային և մնացորդային դիմադրությունները կարելի է անմիջականորեն հաշվել վկայակոչելով նկ. 9-ը, որոնք համապատասխանում են ⁴ միջին էֆեկտիվ ճնշմանը:

Այժմ, բանի որ այդ լուրբանչյուր դեպքում տնդի է ունեցել սողը, պաշարի գործակիցը պետք է հավասար լինի 1,0, և Տ կավի իրական միջին սահման դիմադրությունը սահմանակ պետք է հավասար լիներ միջին շոշափող լարմանը: Այսպիսով, համեմատելով Տ-ի արժեքը ⁵Տ₁ -ի և Տ₂ -ի հետ, մնուք անմիջապես կնկատենք՝ արդյոք պիկային է եղել սահմանային մասնակցած կավի դիմադրությունը, մնացորդային, թե մի այլ միջանկյալ նշանակության:

իսկապես, եթե առաջընթաց քայլայման բմբոնումը միշտ է ձևդրավորված կազմերի համար, ապա մենք կարող ենք սպասել, որ այդ կավերի միշին դիմադրությունը ժամանակի ընթացքում կփոքրանա: Սողանքը առաջանում է այն ժամանակ, երբ միշին դիմադրությունը հասնում է միշին շոշափող լարման արժեքին, որը, ինչպես վերը նշվեց, ազդում է անընդհատ կերպով այն ժամանակից, երբ առաջացել է լանջը:

Որպեսզի այս մեծության համար ունենանք հարմար քանակական արտահայտություն, մինչև որը նվազել է միշին դիմադրությունը, ես կմտցնեմ «մնացորդային գործոն» հասկացողությունը, որը որոշվում է հետեւյալ արտահայտությամբ.

$$R = \frac{s_i - \bar{s}}{s_i - s_r}$$

Կամ

$$\bar{s} = R \cdot s_r + (1 - R) \cdot s_i$$

Այսպիսով, ֆիզիկական իմաստով R -ը ներկայացնում է կամի մեջ սահման մակերեսի այն մասը, որի երկայնքով դիմադրությունը նվազել է մինչև մնացորդային նշանակություն:

Պարզ է, որ եթե տեղի չի ունենում պիկային դիմադրության նվազում և ամրող կավը ունի պիկային դիմադրություն, ապա $R = 0$: Ընդհակառակն է, որ միշին դիմադրությունը հասել է մինչև մնացորդային նշանակությանը, ապա $R = 1,0$: Նկ. 9-ում ցույց տրված կետի համար միշին դիմադրությունը նվազել է կեսից ավելի՝ երկու սահմանների միջակայրում և R -ը կազմում է մոտավորապես 0,6, այսինքն սահման մակերեսի մոտ 60% անցնում է կավերով, որոնց սահմանի դիմադրությունը մնացորդային է:

Սողանքների նկարագրության ուսումնասիրության նպատակն է որոշելու R -ի մեծությունը և հնարավորին շափ կապ հաստատելու կամի տեսակի հետ:

ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զեկֆիլլ*

1952-ին Զեկֆիլլ գյուղում, Շրողշիր, Սևերն գետի վրա, Այրոն-Բրիդջից հոսքի ուղղությամբ 2 կմ ներքեւ տեղի ունեցավ սողանք, որը բանկեց մի քանի տար և առաջցրեց երկաթզծի ու ավտոճանապարհի մեծ տեղաշարժ (Նկ. 10): Այս տեղանքում Սևերն գետը հոսում է Ս-աձև հովտով: Նրա էրողիոն գործունեությունը մեծ շափով, եթե ոչ ամրացությամբ բնիւթացել է զլամակոր ցամաքային սաղցապատման սաղցավահանի հահանջությունը: Էրողիան մինչև հիմա շարուկանվում է, և հովտի լանջերը ծածկված են տարբեր հասակի սողանքների մողախայով:

Հնարավոր է, որ նախորդ սողանքները, համենայն գեպս, որոշ շափով կարող էին անցնել գոյություն ունեցող սահման մակերեսով, բայց լանջը բիշե շատ կայուն է եղել երկար ժամանակ, մինչև 1950 թիվը, երբ առաջ եկավ անկայունության նախազգուշացնող նշանը՝ բատարի խղումը, որը սնում էր

* Զեկֆիլլի սողանքի նկարագրությունը նախկինում տպագրված է եղել (Խոկել և Տկեմլի, 1958), բայց ես վերցերս բննադատաբար վերանայեցի բոլոր նախնական տվյալները և եկամ մի այլ նկարագրության՝ որոշ տեսակեափից տարբեր, որոնք տրված էին 10 տարի սովոր:

գետի ափի կոտեղները: 1951-ի վերջին նկատվեցին հետագա շարժումները, իսկ 1952-ին վտանգավոր դարձավ ճանապարհը: Հաշորդ մեկ-երկու ամիսների ընթացքում սողանքն սկսեց սպառնալիորեն զարգանալ: Վեց առև լրիվ բանդվեցին, գաղատարր պետք է դարձվեր վերգետնյա, երկաթօդով շարժումը հարավոր էր միայն շնորհիվ գծի ամենօրյա հակողության, իսկ դետի երկայնքով անցնող երկրորդական ճանապարհը փակված էր երթևեկության համար: Այժմ յանցի գետի ներքեւ ամենամեծ շարժումը համար է 18 մ:

Դոկտոր Հենկելը և ևս ուսումնասիրել ենք այս սպանքը 1952 թ. աշնանը: Շարժումները, որոնք ամառվա ընթացքում դարձել էին մշտական նորից վերսկսելի էին և մենք հնարավորություն ունեինք շոր հորատանցքերում դիտելու ասհեցման մակերեսի ճիշտ խորությունը (նկ. 11):

Ենթաերր, որոնք ներկայացված են կոչտ կավերով և արդիիտներով և որոնք հաջորդվում են մերգելյան բրեկիտներով և ածխի նվազ շերտերով, մեղմ անկում են հարավ-արեկելյան ուղղությամբ, տարածվելով սողանքի լայնական կորդավածքին կուպիտ զուգահեռ: Սակայն սողանքը լրիվ սահմանափակված էր ճեղքափորված, հողմահարված կավերի զոտով, որոնք տարածված էին 6—7,5 մ խորության վրա^{**}: Սահման մակերեսն անցնում էր լանջին զուգահեռ (որը ուներ 10° թերություն) 5,4 մ միջին խորության վրա: Սողանքային զանգվածի երկարությունը, որը չափված է լանջի երկայնքով, լանջով հասնում էր 165 մ: 1952—53 թթ. ձևանը գրանտային ջրերի հորիզոնը մի քանի կետերում հասավ հողի մակերեսութին, չնայած միջին հաշվով այն գտնվում էր 0,6 մ խորության վրա:

Սահման մակերեսում գործող ուժերի վերլուծումը ցույց տվեց, որ $\zeta = 0,63$ կգ/սմ² և $\zeta = 0,20$ կգ/սմ²:

Սահման փորձարկումները զրենամի առկայությամբ 4,5 և 5,7 մ խորությունից վերցրած նմուշների համար, բայց ոչ անմիջականորեն սահման մակերեսին մոտ*** ցույց տվեցին պիկային դիմադրություն $C = 0,21$ կգ/սմ² և $\zeta = 25^{\circ}$ սպառամետրերը (նկ. 12): Երբ կատարվում էին այս փորձարկումները, մենք գետ շունեինք պարզ պատկերացում մնացորդային դիմադրության մեծության մասին: Բարերախտաբար, այնուամենայնիվ, շարունակեցինք դիտումները սահման տուփի ամրող ճանապարհի վրա և այդ արդյունքներով հնարավորություն ունեցանք տալ մնացորդային սահման դիմադրության անկյան մոտավոր գնահատականը: Ինչպես այդ երեսում է նկ. 12-ում, այդ գնահատումը ավել չ' = 19° արժեք: Իրիվ հնարավոր է, որ ավելի ճշգրիտ արժեքը կլինի 18°-ից ցածր:

13 նկարից երեսում է, որ պիկային և մնացորդային դիմադրությունները, որոնք համապատասխանում են 0,63 կգ/սմ² միջին էֆեկտիվ

* Այս նստվածքները իրենց մեջ պարունակում են վերին-ածխաբարային կոլորտի շերտեր:

** Հողմահարված կավը չնայած լրիվ կարծը էր և զետ պահպանվում էր գերկունությունացված կավի բնութագիրը, ամելի բիշ ամուր էր, բան պինդ, նման համարյա ժայռային ապարը հիշեցնող շնորհանական շերտերի: Մրանով է բացարկվում այն, որ սողանքը համեմատաբար խորը չեր, չնայած պետք էր որ միատարր կապակցված նյութում այն տարածվեր ավելի խորը:

*** Խնձօնս և շատ սողաներներում, գերկունությունացված կավերում մենք Զեկֆիդում գտանք փակիցած կավի զոտի, 5 մմ-ից ոչ ավելի հաստությամբ: Նմուշի սահման փորձարկումը, որը փորձած էր այդ զոտությունը, ցույց տվեց $\zeta = 0,07$ կգ/սմ² և $\zeta = 21^{\circ}$: Սահման մակերեսին անմիջական մոտ $\zeta = 1$ արժեքը փորձարկանորն որոշված չէ:

ճնշմանը է որոնք ազդում են սահեցման մակերեսում կազմում են 0,4 և 0,21 կգ/սմ²: Բայց, ինչպես վերը նշվեց, միջին շոշափող լարումները (իսկ այս տեղից և միջին սահքի դիմադրությունը) մակերեսի երկայնքով փլման ժամանակ հավասարվում են 0,20 կգ/սմ²:

Այս պատճառով պարզ է, որ սողանք առաջանալու մոմենտին կավի դիմադրությունը մոտիկ էր նրա մնացորդային նշանակությանը: Խսկապես, ընդունելով $\varphi_r = 19^\circ$, մենք զայխ են այն եղբակացության, որ մնացորդային գործոն $R = 1,12$: Իսկ եթե նկատի ունենանք $\varphi_r - \beta$ ապրոքսիմացնող էությունը, ես կասկածում եմ, որ $R - \beta$ մեծությունը բավկանին տարրերվեր 1,0-ից:

Եթե արդյունքներն արտահայտենք այլ ձանապահով, կիրառելով Զեկ-Փիլդի լանջի կայունության վերլուծության համար պիկային դիմադրությունը, կստանանք, որ պաշարի գործակցի մեծությունը 2,06 է (սխալը ավելի քան 100% է, քանի որ իրական պաշարի գործակիցը հավասար է 1,0-ի): Մյուս կողմից, նույնիսկ կիրառելով $\varphi_r = 19^\circ$ քիչ մշակված նշանակությունը, պաշարի գործակիցը՝ հաշված մնացորդային դիմադրության հիման վրա, տարրերվում է ճիշտ արդյունքից ընազմենը 11%-ով:

Կարելի է ավելացնել, որ $\tilde{\beta} = \tilde{\alpha}$ նշանակությունները, հաշված իրական սահեցման մակերեսների հիման վրա, համապատասխանում են սահքի դիմադրության 17° ($\tilde{\beta}' = 0$ գեպքում) միջին անկյանը: Այս թիվը, որը ես ստացա մոտավոր վերլուծությամբ, հաստատեց Մորգենստերնի կողմից, որը կիրառել էր հաշվարկի ավելի ճշգրիտ եղանակ:

Սելսեա

* Հյուսիսային Յորբիրում Միտլտոն-Բիսդեյլի մոտ Սելսեա պատվարի շինարարության համար առաջարկված տեղամասում մի վազուց այցելության ժամանակ գոկառը թիշոպը և ես գտանք մի հետաքրքիր սողանք, որը առաջացել էր նախքան այդ կուն գետի հովտի գլաբարային կավերից կաղմված լանջում: 1955—1960 թթ. ընթացքում, երբ աշխատանքներ էին տարվում պատվարի վրա, որը գտնվում էր գետի հոսքով գետի վեր ոչ մեծ հեռավորության վրա, օգտագործվել էին տարրեր հնարավորություններ՝ սողանքը հետազոտելու և կավի նմուշները փորձարկելու համար: Այդ արդյունքները հրատարակվել են (Skempton and Brown, 1961) և այստեղ հարկավոր է դրանց ավելացնել միայն այն բանի համար, որպեսզի սողանքի նկարագրությունը մտցվի տվյալ հետազոտության շրջանակը:

Հեղեղների ժամանակ գետը լվանում է հովտի լանջերը և այս ձանապարհով ավելի է ընդարձակում իր հունը (նկ. 14): Չնայած զրան, պրոցեսը շատ արագ շի ընթանում (ավելի շուտ ժամանակի պատմական, քան երկրաբանական մասշարով): Պետական ժառայության 1856-ի հանույթի բարտեզր ցույց է տալիս, որ այն ժամանակ գետը լանջի ստորոտի նկատմամբ գտնվում էր նույն դրությունում, ինչպես որ այժմ: Այդ պատճառով կասկածից վեր է, որ մենք գործ ունենք «երկարատեղ» պայմանների հետ:

Գլաբարային կավը բավկանին համասեն է, չունի ճեղքեր կամ անշատման ճեղքեր և շի հայտնաբերում հոգմահարման ոչ մի նշույլ, բացառությամբ սեղունային փոփոխման ոչ խոր գոտոց:

Սահեցման մակերեսի ճիշտ դրությունը չի որոշված, չնայած լանջի վերեի մասում պարզ երևում էին պոկման ճեղքեր, որի հետևանքով վերլուծվեցին մի

շաբթ հնարավոր սահմարի շրջանները: Մեր նպատակների համար բավականին միշտ են համարվում միշին էֆեկտիվ լարման՝ և միշին շոշափող լարման՝ 0,37 և 0,31 կգ/սմ² ախտիկ արժեքները:

Սահմարի եռառանցքը և կտրման փորձարկումները՝ կատարված զլարաբային կամքերի ուժ նմուշների համար, ափիկին արդյունքների ներդաշնակությունը, որոնք ցուց են տալիս որ պիկային դիմադրությունը կարող է արտահայտվել $c' = 0,09$ կգ/սմ² և $\gamma' = 32^\circ$ պարամետրերով: Փորձարկումները չեն հասցվել մինչև այս գիֆորմացիաները, որոնք մենք հետագա փորձի տեսանկյունից համարում ենք անհրաժեշտ՝ դիմադրությունը ճիշտ որոշելու համար: Բայց նույնիսկ և այս ձևով բավականին վստահ կարելի է գնահատել այդ պարամետրերը $c' = 0$ և $\gamma' = -30^\circ$ մեծություններով (նկ. 15):

Այս պատճառով $c' = 0,37$ կգ/սմ² միշին էֆեկտիվ լարման համապատասխանող պիկային դիմադրությունը կազմում է $s_1 = 0,32$ կգ/սմ², իսկ մնացորդային դիմադրությունը $s_r = 0,21$ կգ/սմ² (նկ. 16): Սակայն, միշին շոշափող լարումը, իսկ այսականից և միշին սահմարի դիմադրությունը, սողանքի ժամանակ կազմում էր 0,31 կգ/սմ²: Սա թիշ փոքր է պիկային դիմադրությունից (պիկային գործոնը $R = 0,08$):

Այսպիսով, եթե սողանքի վերլուծություն կատարվեր, օգտագործելով $c' = 0,09$ կգ/սմ² և $\gamma' = 32^\circ$, ապա հաշված պաշարի գործակիցը կլինեն ճշմարտացի նշանակությանը բավականին մոտիկ՝ հավասար 1-ի: Ընդհակառակը, $\sigma_r = 0$ և $\gamma_r = 30^\circ$ արժեքների կիրառության գեպքում պաշարի գործակցի հաշված մեծությունը հավասար է 0,69 և սխալը կազմում է մոտ 30%:

Ուշագրության է արժանի, որ պիկային դիմադրությունը երեկի լրիվ մորիթիզացված է եղել միաժամանակ սահման մակերեսի երկայնքով: Նույնիսկ այս ժխախտված և չճեղքավորված կավի մեջ կարելի կլիներ, հավանական է, հաշվարկել ու գտնել ավելի կարուկ արտահայտված ցուցումներ՝ առաջընթաց բայցքայման վերաբերյալ, բան այն, որը համապատասխանում է մնացորդային գործոնին, որը հավասար է ընդամենը 8%: Այնուամենայնիվ վիստն այն է, որ վերաբերյալ, ճիմնաված պիկային դիմադրության վրա, հանգեցնում է այրականիկ տեսակետից բավարար արդյունքների*:

Էլեղոնյան կավ

Գոյություն ունեն տվյալներ լոնգոնյան հողմահարված կավերի գոտում տուաչացած մի բանի սողանքների վերաբերյալ: Էլեղոնյան կավերի ամրող հատությամբ կարելի է նկատել ճեղքեր, անշատման ճեղքեր և սահման հաղվայուս հայելիներ: Բայց այս հատկություններն ավելի նկատելի են հողմահարված գոտում, որը տիպիկ է 9—12 մ խորության վրա (նկ. 17): Հողմահարման ակներեւ հատկանիշ է կավի դարչնազույն տեսքը, որը հակա-

* Նման եղբակացության կարելի է հանդել 1956 թ. Հոկտեմբերի 6-ին առաջ սցած էլողակնի մաս դանվագ խորք փորվածքում՝ 0 պոչից ոչ հաս սողանքի հետ սպասարկեց (Սևալյան, 1960): Այսահետ կավը ծավալին ծագում ունի, թայլ գերկոնասլիքացված է և ճեղքավորված, եթե $c' = 0,10$ կգ/սմ² և $\gamma' = 27^\circ$, $w = 29$, $w_1 = 35$, $w_r = 19$ և կավային ֆրակցիան 46%: Սելստում և լողակնեամ սողանքների նկարագրությունները կարող են մեկնարանվել որպես ցուցում այն բանի, որ այս տեղամասում սողքը սահմարի գեպքում ունի ոչ-մեծ ազդեցություն կալերի պիկային դիմադրության վրա:

դրվում է ոչ հողմանարված նյութի «երկնագույն» (իրականում երկնագույն-մոխրագույն) գույնին: Սակայն, հողմանարման ավելի զգայուն հատկությունը է մի քանի անջատման ձևերում այնպիսի միներալների նուրբ թաղանթների առկայությունը, ինչպիսիք են գյուտիտը և լիմոնիտը: Այս նյութերը փոփոխված են, հաճախ հայտնաբերվում են այնպիսի խորություններում, որոնք տեղադրոված են «դարչնագույն» կավի սահմանից ցած:

Բնական է, որ հողմանարված կավի պիկային դիմագրության պարամետրերը որոշ շափով փոփոխվում են տեղամասից տեղամաս, բայց որպես բնորոշարժեքներ կարող են ընդունվել* $c' = 0,16$ կգ/սմ² և $\varphi' = 20^\circ$ (նկ. 18): Ինչ վերաբերում է մնացորդային դիմագրությանը, ապա Սոյլ Մերանիքս կիմիտիդց Ուիլյամ Ուուտսոնը նմուշների վրա սահմանադրությանը, ապա Սոյլ Մերանիքս կիմիտիդց Ուիլյամ Ուուտսոնը նմուշների վրա սահմանադրությանը, ապա Սոյլ Մերանիքս կիմիտիդց Ուիլյամ Ուուտսոնը նմուշների վրա սահմանադրությանը, ապա Սոյլ Մերանիքս կիմիտիդց Ուիլյամ Ուուտսոնը նմուշների մնացորդային դիմագրությունը, օգտագործելով հետազարձ կտրման փորձարկումների տեխնիկան: Արդյունքները ցույց են տալիս, որ φ'_c կազմում է մոտավորապես 16° (նկ. 18):

Հետազարձ փորձարկումներից մեկի արդյունքները մեծ գեֆորմացիաների դեպքում ցույց է տրված նկ. 19-ում, իսկ սահմանադրությանը հայելին նմուշում փորձարկումից հետո ցույց է տրված նկ. 20 (ներդիր):

Բարակ կտրվածքի ուսումնասիրությունը միկրոսկոպի տակ, որը պատրաստված էր կավի նմուշից երլիքի կողմից, ցույց է տալիս ուժեղ կողմնորոշված մասնիկների շրջան, նման նրանց, որոնք դիմագրում էին Ուուտսոնս կավում մոտավորապես 10° և հաստությամբ:

Փափկացած կավերի գոտին, որը կոսիտ կերպով տարածվում է $2,5$ սմ լայնությամբ, սահմանադրության երկու կողմերում բնորոշ է լոնգոնյան կամի համար: Եթեք բնորոշ օրինակներ ցույց են տրված նկ. 21-ում: Ինչպես երեսմ է սահմանադրությանն անմիջականորեն մոտ խոնավությունը կազմում է մոտ 35% , մինչդեռ շրջապատող շիտիկացած կավինը 30% է:

Անդրագաղութակավածք այժմ լոնգոնյան կավերում սողանքների նկարագրմանը, սկզբում շոշափենք Քենդոլ Գրինում հենապատի փլումը, որը տեղի ունեցավ 1941 թ.**: Պատն ուներ բավականին երկարություն: Այն կառուցվել էր 1912-ին: 1929-ին տեղի ունեցավ նրա փլումը ամենաբարձր կտրվածքում, որը 1941-ի

* Եշքորդ Կոմմոնի մոտի խոր հորից (Ստեյնում) վերցրած մոնուեների վրա կատարած փորձերը ցույց տվեցին, որ c' և φ' նշանակությունները չողմանարված լոնգոնյան կավերի շամար բավականին բարձր են, բայց հողմանարված գոտու համար: Այդ փորձերը կատարվել են Խմակերիալ Կոլեցում և Ենիսեյան փորձական կայանի կողմից և Շատարակված են՝ գոկտ. Ա. Վ. Բիշոպի, Դ. Ա. Ռեբրի և Ա. Ն. Լենինի հոգվածում (Bishop et al., 1965): Վերը բերված և ուրիշ ճեղքագործած լոնգոնյան կավերի պիկային դիմագրության պարամետրերը որոշված են համեմատարար փոքր նմուշների վրա և հիմնականում վերաբերում են ձեռք շտագած նյութերին: Մեծ նմուշների վրա կատարած փորձերը ցույց են տալիս ավելի փոքր դիմագրություն՝ ճեղքերի առկայության հետևանքով: Սակայն մնացորդային դիմագրությունը պետք է անկախ լինի նմուշի շափերից:

** Քենդոլ Գրին փորվածքը կատարվել է 1835-ին Լոնդոն—Բիթմինհամ երկաթուղու համար: Լայնացում կատարվել է 1875 թ. և 1912 -ին, երբ կառուցվեց այժմ գոյություն ունեցող հենապատի: Քենդոլ կավականին է, որ 1875-ի փորվածքը ունենար որնէ չական ազդեցություն կավերի վրա, որոնք ենթարկվեցին 1941 թ. փլումը: Որպես շինարարական-հետազոտական կայանի աշխատակից, որին ճեղքագործում էր զոկտոր Կուլինգը, ինձ բախտ վիճակվեց կատարել փլումն հետազոտիչությանը:

սողանթից 75 մետրի վրա էր: Վերականգնումից հետո պատի ամբողջ երկայնք անդակալի վեցին դիտարկման կամքը: Պատահականորեն ստացվեց այնպես, որ այդ տոպոգրաֆիկական պրոֆիլներից մեզը գտնվում էր 1947 թվականի մարտում շարժումից մի քանի մետրի վրա: Այսպիսով, մեզ հաջողվեց ունենալու փլմանը նախորդող 12 տարիների տեղաշարժման անընդմեջ գրանցումը (նկ. 22): Գիտման մի քանի տարիների ընթացքում, երբ պատը գոյացվուն ուներ արգել 17 տարի, տեղափոխման արագությունը փորբ էր (մոտ 6 մմ տարում): Բայց արագությունն աստիճանաբար սկսեց ավելանալ, և, վերշապես, ընդհանուր տեղաշարժը հասավ 45 սմ-ի:

Գծվար կլիներ պատկերացնել զարգացող բայթայման ավելի լավ ազացույց: Գիտարկելով ժամանակ-տեղաշարժում կորագիծը նկ. 22-ում կարելի է տեսնել, որ կամքի միջին դիմագրությունը փորբանում է և մոտենում է զործող շոշափող լարմանը, որին համապատասխան տեղի են ունենում ավելի ու ավելի մեծ շարժումներ, այն շափով, որ շափով կամքի դիմագրությունը ընթափում է մնացորդային նշանակությանը:

Սահեցման մակերեսում աղղող ուժերի վերլուծությունը ցույց է տալիս, որ $\bar{z}' = 39$ կգ/սմ², որի պատճառով միջին պիկային և մնացորդային դիմագրությունները համապատասխանաբար հավասար են 0,298 կգ/սմ² և 0,112 կգ/սմ² (նկ. 23): Բայց սահեցման մակերեսի երկայնքով միջին շոշափող լարումը կազմում է 0,186 կգ/սմ²: Այս մեծությունը հանդիսանում է նաև սահրե դիմագրությունը փլման ժամանակ: Այսպիսով, անմիջականորեն հարավոր է հաշվել մնացորդային դորձոնք, քանի որ՝ $R = \frac{0,298 - 0,186}{0,298 - 0,112} = 0,61$:

Այսականից երեսում է, որ միջին դիմագրությունը 29 տարում ընկել է մոտավորապես 60%-ով՝ պիկային դիմագրությունից մինչև մնացորդայինը տանող ճանապարհին: Ուրիշ խոսքով, դիմագրությունը ընկել է մինչև մնացորդային նշանակությունը սահեցման մակերեսի երկայնքի 60% մասում, այնինչ պիկային նշանակությունը պահպանվել է մնացած 40%-ով:

Գիտարկենք այս պրոբլեմը այլ տեսակետից: Եթե ամբողջ սահեցման մակերեսի համար կիրառվեր պիկային դիմագրությունը, ապա հաշվարկած պաշարի գործակիցը կկազմեր 1,6: Այսինչ, եթե կիրառվեր մնացորդայինը դիմագրությունը, այդ մեծությունը հավասար կլիներ 0,6: Պաշարի գործակիցի իսկական նշանակությունը հավասար է 1,0 և սահրե դիմագրության պարամետրերը, որոնք պահպանվում են այն քանի համար, որպեսզի կայունության հաշվարկի ժամանակ տան այդ արդյունքը, կազմում են $C' = 0,061$ կգ/սմ² և $\bar{z}' = 17,5^\circ$ և որոնք համապատասխանում են $R = 0,61$:

